

### Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

#### Ճ Ե Ն Ա Յ Ա Փ Ի Ո Ն Ի Գ Ո Ր Թ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Երբ Քէմիֆէր հռչակաւոր գերմանացի ուղևորը՝ 1688ին, հոլանդական կալուածոց յայց ելաւ յԱրեւելս, եւ այս առթիւ ճաւա կղզին հասաւ, մեծ զարմացմամբ տեսաւ որ տեղացիք ծխախոտի տերեւները կը ծխէին, որոնք նախ՝ ափիոնի լուծուածքի մը մէջ խոթուած՝ ապա չորցուած եւ գալարուած էին: Ասիկայ է իսկական ծագումը ծխելու այն խաշխաշի հոյզէն՝ որ Աֆրիկայի անուան ներքեւ աշխարհածաւոթ է:

Շատ չանցած՝ ճինացիք Մալայական արքիպելագոսին կղզիներն երթալու առնն՝ տեղացիներէն այս կերպ ծխելու վարժելով, հայրենիք դառնալէն ետեւ ալ՝ ջանացին եւս քան զեւս տարածել: Կախ եւ յառաջ Փիլիպպին կղզիներէն եկած ծխախոտին հետ խաշխաշի մուգէն փոքր քանակութիւն մը միայն խառնեցին. բայց տակաւ յաւելուածն այնչափ շատցուցին՝ որ ալ ծխախոտը բոլորովին թողլով՝ անոր ափիոն փոխանակեցին: Բայց ափիոնի փողն անցեալ դարուս վերջերը ճինաստանի մէջ՝ եւ այն՝ միայն հարաւային կողմերը տարածուեցաւ, որուն ի սկզբան վարչութիւնն շատ միտ էր զներ: Բայց յընթացս ժամանակաց ափիոն ծխելն այնպէս ընդհանրացաւ, որ յամին 1799 կայսերական հրովարտակ մ'ելաւ, որ խստիւ կ'արգելէր ափիոնի վաճառականութիւնը: Ասով կը յուսացուէր թէ այս թմբրեցուցիչ գեղին վաճառքը՝ որ ցայժմ՝ դրացի Բրիտանական-չնդկաստանէն կը մտնէր, պետութեան սահմանին վրայ կը խափանուի, որով արմատացեալ չարեաց աղբիւրն ի սպառ կը խցուի:

Բայց յոյսերն ի գերեւ ելան: Հազիւ թէ այս ցայն վայր ներեալ օրինաւոր վաճառարներութիւնն արգելուեցաւ, սկսաւ մաքսանենդութիւնն արագաբայլ յառաջանալ, զոր կառավարութիւնն միշտ իսկ խիստ պատժովք կարճելու ջանաց: Ի սկզբան վճռեց որ թէ ափիոն վաճառողներն եւ թէ ծխողները հնդկեղեգամբ այսչափ ինչ հարուած ընդունին, եւ ապա երբ ասով ալ ի գլուխ չելաւ՝ չգանդաղեցաւ մահու պատիժ եւս սպաննալ: Սակայն ի զուր. որ եւ է հնարիւք չկրցաւ կարճել այն հնացեալ մուլութիւնն՝ որ այնուհետեւ յաղթապանձ զօրութեամբ բովանդակ հսկայ պետութիւնն անոյցս եւ անդարման վարակեց: Բանութիւնք եւ հարս-

տահարութիւնք՝ զոր ճինացի իշխանք կը գործադրէին դրսէն ափիոն բերելն արգելելու համար, — որովհետեւ յայտնի կը զգային որ ժողովրդեան եկամտից, բարոյից ու շահուն շատ վնասակար է, — ճնական ազգային պատմութեան գլխաւոր նիւթերէն մին են: Բնականաբար Բրիտանացոց խարդախութիւնն ու պատրանքն էր ասոր բուն պատճառը, որոնք ճնացի պաշտօնեաներն կաշառելով եւ այլեւայլ խարեպատիր խոստումներով իրենց թոյնը ներս կը հասցընէին: Ափիոնն ամէնէն շահաւոր վաճառքն էր Անգղիացոց:

Անգամ մ'ալ խիստ ընթացք բունց ճնական կառավարութիւնն՝ ափիոնի վաճառականութեան վերջ տալու վախճանաւ: Տերութիւնը զլին կառավարն Քանդոնի նաւահանգիստը զնկեց, ուր՝ 1839 Մարտ 13ին ծպտեալ զգեստուք անգղիական նաւերուն եւ խանութներուն այց ելլելով՝ ափիոնի անբաւ մթերք գտաւ. իսկոյն հրամայեց որ առանց դիմագործութեան պաշտօնէից ձեռքն յանձնուի, ապա թէ ոչ ամէնքն ալ մահուամբ կը պատժուին: Այս պահանջման ձայնն այնպէս սպառնական էր, որ անգղիական վաճառականութեան պարագլուխը՝ որ ետքէն Մաքսօ տարուելով բանտարկուեցաւ, շատ խոհեմութեամբ իւրայնոց խորհուրդ տուաւ որ առանց դիմագործեան տեղի տան: Եւ այսպէս՝ 20 հազար արկղէ աւելի ափիոն՝ 100 միլիոն ֆրանք արժողութեամբ՝ յանձնուեցաւ, զոր ճնական պաշտօնատեարք նոյնհետայն հրոյ ճարակ տուին: Այս գործողութիւնս մէկ ամիս տեւեց:

Անգղիա այս իրողութիւնն իսկական յարձակում մ'ենթադրելով՝ եւ վրան քանի մը փոփոխակի աւարաուութիւն ալ հանդիպելով՝ ճնացի գէմ 1840ին պատերազմ՝ հրատարակեց: Ելլիւ ծովապետին հրամանատարութեան տակ՝ քաջամարտ զօրաց բազմաթիւ գումարտակները զրկուեցան ի ճնաստան. երկու տարի անընդհատ երկու կողմանք կը կուռէին առանց որոշիչ ճակատու: Երբ վերջապէս Անգղիացիք աներկիւղ յառաջ խաղալով՝ զհանքին պաշարեցին՝ որ առանց նշանաւոր ընդդիմութեան կատարեցաւ, հանքինի դաշինքը դրուեցաւ, որ 1843 Յունիս 29ին ստորագրուեցաւ, եւ պատերազմը վերջացաւ, զոր պատմութիւնն Աֆրիկայի պատերազմէն անուամբ կը յիշեցընէ մեզի: Որչափ ալ ի սկզբան Անգղիոյ այսպիսի ընթացքն ու վարմունքը դատապարտելի էր, սակայն պատերազմին հետեւութիւններն առ հասարակ շատ